

ԵՐԲ ՍՊԱՍՈՂՆԵՐ ՈՒՆԵՍ ԵՒ ԱՍԵԼԻՔ

(ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆԻ ԾՆՆՆՅԱՆ 60-ԱՍՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Մեր տանը շատ գրքերի հետ մի գիրք էլ կա: Նրա վերնագիրն է. «Կարմիր եւ կապույտ փողկապներ», իսկ հեղինակի անունից քիչ ներքեւ աշակերտական ձեռագրով գրված է. «Իմ սիրած գրքերից մեկը»: Բոլորն էլ գիտեն, որ գրքի վրա գրել չի կարելի, գիրքը պետք է պահել մաքուր ու խնամքով: Բայց այս անգամ, ճիշտն ասած, ես նախատելու համար չհետաքրքրվեցի, թե երեխաներից ո՞վ է գրել այդ տողը

Նույնիսկ կասկածեցի, թե գուցե ես եմ գրել տարիներ առաջ, որովհետեւ, իմ պատանի օրերի ամենասիրած գրքերից մեկն էր «Կարմիր եւ կապույտ փողկապները»: Հետո հիշեցի, որ մեր ժամանակ այն ուրիշ անուն ուներ, կոչվում էր «Սկաուտ-89»:

Ի՛նչ հափշտակությամբ էինք կարդում: Ինչպիսի՞ հետաքրքրությամբ ու հուզմունքով էինք հետեւում 89 համարը կրող սկաուտի եւ նրա ընկերների դառն ու դժվարին, տառապանքներով ու խիզախումներով լի կյանքին: Իսկ հիմա մեր զավակներն են կարդում նույն հափշտակությամբ ու սիրով: Ուրեմն, լավ գիրքը երբեք չի ծերանում, որովհետեւ յուրաքանչյուր նոր սերնդի հետ ծնվում է նորից եւ յուրաքանչյուր նոր սերնդի համար նոր աշխարհ է: Ուրեմն, լավ գիրքը տարիք չունի:

Բայց, ափսո՛ս, հեղինակները տարիք ունեն:

Այսօր «Կարմիր եւ կապույտ փողկապներ» գրքի հեղինակը վաթսուն տարեկան է:

Իր հերոսների նման կյանքի ծանր ու դժվարին ճանապարհ է անցել Մկրտիչ Արմենը: Եւ պատվավոր ճանապարհ:

Հազվագյուտ արձակագիրների է նման բախտ վիճակվում: Դեռ քսանութ տարեկան, նա հենց իր առաջին ծավալուն գործով դարձավ հայ գրականության նշանավոր դեմքերից մեկը: Նրա «Հեղնար աղբյուր» վիպակը գրեթե աննախադեպ հաջողություն ունեցավ: Ընթերցողներին հմայեց երիտասարդ գրողի կյանքի խորը, ճանաչողությունը, հրաշալի, հյութեղ լեզուն, պատկերավոր մտածողությունը, հոգեբանական բարդ ու զարմանալի, նուրբ վերլուծությունները: «Հեղնար աղբյուրը» միանգամից իր տեղը գրավեց հայ գրականության ոսկե ֆոնդում եւ համարվեց մեր արձակի գոհարներից մեկը: Ավելի քան երեսուն տարի առաջ լույս տեսած վիպակը մինչեւ օրս էլ կարդացվում է չթուլացող հետաքրքրությամբ, ընթերցողների նորանոր բանակներ գերելով եւ շարունակելով իր հաղթարշավը երկրագնդի վրայով: «Հեղնար աղբյուրը» թարգմանվել է շատ լեզուներով: Վերջերս այն լույս տեսավ պարսկերեն ու չեխերեն եւ, ինչպես պետք էր սպասել, մեծ ընդունելության արժանացավ:

«Հեղնար աղբյուր» վիպակին հաջորդեցին ճանաչված հեղինակի նորանոր պատմվածքներն ու վեպերը՝ «Կարմիր ու կապույտ փողկապները», «Յասվան», «Ժիրայր Գլենցը»...

Թեև վաթսուն տարեկան, բայց եռանդով ու կյանքով լի է Մկրտիչ Արմենը եւ աշխատում է պատանու խանդավառությամբ, որովհետեւ գիտի, ընթերցողը նորանոր գործեր է սպասում: Իսկ երբ սպասողներ ունես եւ ասելիք, ի՛նչ մի մեծ բան է վաթսուն տարին, երբ գիտես, որ քո փառավոր հորեյանի օրը հազա՛ր-հազար մարդիկ աշխարհի տարբեր ծայրերում բաժակ են բարձրացնում՝ ցանկանում քեզ նորանոր հաջողություններ եւ մաղթում են, ինչպես հին գյումրեցի արհեստավորներն իրենց սիրելի վարպետին՝ ուստա Մկրտչին.

«Ամեն անգամվա պես առաջին կենացը կենացդ էդնի, ազիզ: Կյանքդ էնքան երկան էդնի, ինչքան օր, ափսո՛ս, մահն է երկան»:

ԱՐՏ. ՔԱԼԱՆԹԱՆՅԱՆ